

Շար.ը՝ էջ 3

ԱՐԱՄ Ա. ԸՆԴՈՒՆԵՑ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Երէկ առաւօտ՝ Արամ Ա. կաթողիկոս վեհարարական արարողութիւն մէջ ընդունեց Յունաց Տիեզերական պատրիարքին ներկայացուցիչը Էմմանուէլ մետրոպոլիտը եւ Յունաստանի արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչը:

Անոնց այցելութեան նպատակն էր խորհրդակցել, Դեկտեմբերին Պելճիքայի մէջ տեղի ունենալիք միջազգային համագումարին մասին: Տիեզերական պատրիարքը Եւրոպական խորհուրդին հետ գործակցաբար կը ծրագրէ կապակերպել համագումար մը ահաբեկչութեան մասին, յատկապէս շեշտելով միաստուածեան կրօններուն (հրեւոթիւն, քրիստոնէութիւն եւ իսլամութիւն) գործակցութիւնը այս գծով: Համագումարին պիտի մասնակցին երեք կրօնները՝ ներկայացնող հոգեւոր պետեր, մասնաւորաբար այն երկիրներէն, ուր կրօններու գոյակցութեան փորձառութիւն գոյութիւն ունի:

ՖԻՆԻԼԻ ԻՐԼԱՆՏԱԿԱՆ ԶՕՐԱՄԱՍԻ ՎԵՐՋԻՆ ԽՈՒՄԲԸ ՄԵԿՆԵՑԱԻ

Ֆինիլի իրլանտական պորամասի վերջին խումբը երէկ հարաւային Լիբանանի մէջ 22 տարուան կեցութենէ ետք վերջնականապէս մեկնեցաւ, ընկերակցութեամբ Իրլանտայի պաշտպանութեան նախարար Մայքլ Սմիթի: Զորամասի Թրակիի կեդրոնատեղիին մէջ այս առիթով կատարուեցաւ հանդիսութիւն մը, որուն ընթացքին Սմիթ ըսաւ, որ Իրլանտա պիտի շարունակէ քաղաքական եւ այլ օժանդակութիւններ տրամադրել Լիբանանի: Ան յիշեցուց պորամասին հարաւի մէջ տուած 46 նահատակները եւ խաղաղութիւն մաղթեց Լիբանանի:

161 իրլանտացի սպայ եւ պինտուր, Թրակիի իրենց կեդրոնատեղիին Ֆինիլի Կանայի ջոկատին յանձնելով՝ ուղղուեցան Պէյրութի օդակայան, ուրիկ մեկնեցան: 41 սպայ եւ պինտուր կը մնան Ֆինիլի Նաքուրայի կեդրոնատեղիին մէջ, ծրարելու եւ փոխադրելու պորամասի սարքերը:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՀԱՐԱՆԻ ապստաղութիւնի ատեն Իսրայէլ ապստանած 68 անձեր երէկ Ֆինիլի օթոպիւններով Լիբանան վերադարձան Նաքուրայի սահմանային անցքէն:

Նաքուրայի նաւահանգիստին մէջ Ֆինիլի լիբանանեան իշխանութիւններուն յանձնեց վերադարձողները, որոնցմէ կիներն ու երեխաները անմիջապէս ապստաղութեանցան եւ փոխադրուեցան իրենց շրջանները, մինչ այլ մարդիկ կը հարցաքննուին:

● ԻՍՐԱԵԼԵԱՆ օդանաւեր երէկ թռիչքներ կատարեցին Հասպայա, Մարաշային եւ Իքլիմ Թըֆահ շրջաններուն վերեւ, հասնելով մինչեւ հարաւի ծովեզերեայ շրջանները, ապա թռիչքներ կատարեցին արեւմտեան Պէքալայի վերեւ, կէսօրէ ետք հասնելով Պէյրութ:

Դիմադրութեան ուժերը հակօդային պէնքերէ կրակ բացին այն իսրայէլեան օդանաւերուն վրայ, որոնք թռիչք կը կատարէին Պընթըժայիլի վերեւ:

Միւս կողմէ, երէկ հաղորդուեցաւ, որ իսրայէլեան ուժեր լիբանանեան սահմանէն կէս քիլոմէթր հեռաւորութեան վրայ գտնուող իրենց Ջըհէյրայի դիրքին մէջ հրասայլերու յատուկ դիրքեր կը պատրաստեն:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Ժիրայր Նալպանտեան եւ զաւակունք Տիար Թարութիւն Չափարեան
Տիար Վաչէ Չափարեան եւ զաւակունք
Տիկին Սալուա Չափարեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Սէմիր Մըստրիհ եւ զաւակունք
Տիկին Նարինէ Չափարեան եւ զաւակունք
Օր. Քրիստին Չափարեան
Տիար Արամ Չափարեան
եւ Համայն ազգականներ կը գլուխ իրենց եղբոր եւ հարազատին՝

ԱԼԵՔՍԱՆ ԶԱՓԱՐԵԱՆԻ

Մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի 12 Նոյեմբեր, 2001ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Թուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երեքշաբթի 13 Նոյեմբեր 2001, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Մարաշի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրիկ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին Ժիրայր Նալպանտեանի բնակարանը, Չորեքշաբթի 14, Հինգշաբթի 15 եւ Ուրբաթ 16 Նոյեմբերին:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԱՅՍՕՐ ԳԵՐՄԱՆԻԱ ԿԸ ՄԵԿՆԻ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի այսօր կը մեկնի Գերմանիա, ուր վարչապետ Կերհարտ Շրեյտերի հետ պիտի քննարկէ միջազգային եւ միջին արեւելեան վարգացումները, ինչպէս նաեւ պիտի ներկայացնէ անոնց առնչութեամբ Լիբանանի կեցուածքը:

Հարիրի երէկ հրապարակուած յայտարարութեամբ մը կոչ ուղղեց միջազգային ընտանիքին «բիրեղացնելու Աֆղանիստանի յստակ քաղաքական ապագան, զուգահեռաբար Թալեպանի վարչակարգը տապալելու նպատակով պինտուրական արշաւին»:

Հարիրի ըսաւ, որ Քապուլէն թալեպաններու հեռացումին եւ Հուսային Դաշնակցութեան ուժերուն Աֆղանիստանի մայրաքաղաք մուտքին մասին տեղեկութիւնները պէտք է խթանեն նոր կառավարութեան մը կազմութիւնը, առաւելագոյն չափով ներկայացնելու աֆղան ժողովուրդը, որ պէսպի վերջ դրուի երկու տասնամեակէ աւելի տեւած տառապանքին:

Ան նաեւ կոչ ուղղեց միջազգային ընտանիքին երաշխաւորելու, որ Քապուլի եւ այլ շրջաններու անմեղ քաղաքայինները անգամ մը եւս ռազ-

մական վարգացումներուն եւ կամ ցեղախմբային տարակարծութիւններուն զոհը չդառնան, այլ ճշդելու յստակ քաղաքական գործընթաց մը, որ կը լուծէ այս հարցերը եւ կը պահպանէ մարդկային իրաւունքները:

Վարչապետ Հարիրի երէկ ընդունեց փաստաբաններու սենտիքայի նախագահ Միշէլ Լիանը, Լիբանանի գործարարականաց խորհուրդը եւ նախկին նախարար Ֆուատ Պուրթ-

ալ: Պուրթուս ըսաւ, որ քննարկած են ներկայ իրավիճակը, ընդգծելով որ այս պահը շատախօսելու պահ չէ, այլ՝ լրջախոհութեան, որպէսզի ապահովուին երկրին շահերը: Վարչապետ Հարիրի ի գործ դրած ճիգերը ողջունելով Պուրթուս յայտնեց որ ան յաւատես է եւ մտահոգիչ բան չկայ:

Վարչապետ Հարիրի նաեւ ընդունեց նախկին փոխ վարչապետ Էրեսփոխան Միշէլ Մըրը:

ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ԿԸ ՄՊԱՌՆԱՆ ԿՐԿՆԵԼ ԴԱՍԱԴՈՒԼԸ

Պետական վարժարաններու երկրորդական, միջնակարգ եւ նախակրթարանի բաժիններու ուսուցիչները երէկ կատարեցին ընդհանուր դասադուլ մը, որուն ընթացքին նստացոյցեր եւ հաւաքներ կազմակերպուեցան:

Յետմիջօրէին պետական ուսուցիչներու լիկաները միացեալ հաղորդագրութեամբ մը յայտարարեցին, որ միօրեայ պուլուստին այս դասադուլը ուղղակի եւ անմիջական պատգամ մըն է պետական պատասխանատուներուն, որպէսզի անոնք փութան դարմանելու կացութիւնը եւ վաւերացնելու իրենց պահանջները, ապա թէ ոչ իրենք պիտի առնեն ճշունդի այլ քայլեր, պաշտպանելու համար իրենց իրաւունքները եւ ապահովելու համար անոնց վաւերացումը:

Միւս կողմէ, Լիբանանեան համալսարանի դասախօսները

ԿԻԹԱՌԻ ԴԱՍԵՐ
● Ընթածայնէ՝ 04-414751:

երէկ շարունակեցին իրենց դասադուլը, որ քննարկումի նիւթ դարձաւ կրթութեան եւ բարձրագոյն ուսման խորհրդարանական յանձնախումբի երէկեւան ժողովին: Ժողովը յանձնախումբի նախագահ Էրեսփոխան Պահիա Հարիրին լիպօրեց հաղորդակցութեան մէջ մտնելու կրթութեան նախարար Ալատէլ Ռահիմ Մըրատի հետ, հետաքրքրուելու այս հարցը դարմանելու համար առնուած քայլերով: Ժողովը նաեւ պորակցութիւն յայտնեց նախարարութիւնը – դասախօսներ երկխօսութեան վերսկսելու առաջարկին, որպէսզի վերջ դրուի դասադուլին, եւ վերսկսի ակադեմական աշխատանքը:

ԿՈՒԶՈՒԻ

● PHOTO EDMOND կարիք ունի հաշուապահ կամ հաշուապահուիչի մը, շէն 3 տարուան փորձառութեամբ, անգլերէն եւ համակարգիչ գիտնալը պայման: Հեռ. 01 - 263000: Անձամբ դիմելը նախընտրելի:

ՃԵՄԱՐԱՆԻ ՍԱՆԵՐՈՒ ՖՈՆՏԻՆ

● Ուրբէն Աղբալեանի մահուան առիթով. Խումբ մը ձեմարանականցներ 150 տոլար

ՉՈՐՍ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒ ՅԱՒԵԼՈՒՄԵՒՍ

Ընդառաջելով աշակերտական յաւելեալ դիմումներուն, ՓՕԼԻԿԼՕԹ ԹԵՔՆԻԶԸԸ ԶՈԼԵԶԻ տնօրէնութիւնը չորս դասարաններ եւս աւելցուց գոյութիւն ունեցող դասարաններուն վրայ:

Արդ՝ ի վիճակի ենք ընդունելու սահմանափակ թիւով մօր աշակերտներ, կարգ մը մասնագիտութեանց մէջ:

POLYGLOT TECHNICAL COLLEGE
DORA - TEL. 01 - 251320
ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԵՆ ՊԵՏՐՈՍ ԶԵՄՏԵՍԵԱՆ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎ

Ներքին գործոց նախարար Էլիաս Մըր երէկ նախագահեց Ապահովութեան Կեդրոնական Խորհուրդի այս ամսուան ժողովին, որուն ընթացքին քննարկուեցաւ ընդհանուր ապահովական վիճակն ու զայն պահպանելու համար գինեալ ուժերու եւ ապահովական վարչութիւններու ի գործ դրած միջոցառումները:

Ժողովը հաստատեց, որ գետնի վրայ կը տիրէ հանդարտութիւն: Այս միջոցառումը ամրապնդելու համար որոշուեցաւ դիմել որոշ կարգադրութիւններու, նկատի առած որ մօտ օրէն կը սկսի Ռամադան ամիսը եւ տօնական այլ օրեր:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻՇԷԼ ՄԸՐԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի հետ երէկ տեսակցելէ ետք, նախկին փոխ վարչապետ Միշէլ Մըր վարմանք յայտնեց պետական պաշտօնեաներու նշանակումներուն վերաբերեալ իշխանութեան պետերուն միջեւ տարակարծութեանց մասին լուրերուն համար, նկատել տալով, որ նախարարաց խորհուրդի որդեգրած նշանակումներու նոր ձեւին հիմամբ նախարարներու կողմէ առաջարկները չեն կատարուած ցարդ, եւ պետական պաշտօնեան հարցերու խորհուրդը տակաւին չէ պատրաստած թեկնածուներու անուանացանկը:

Մըր վեր առաւ ներքին միասնութիւնը ամրապնդելու եւ ներքին տարակարծութիւններէն հեռու մնալու անհրաժեշտութիւնը՝ դիմագրաւելու համար միջազգային բեմի վարգացումները:

Կառավարութեան շօշափելի արդիւնք տալու համար իր տուած պայմանաւածքին եւ անկէ ետք իր ընդդիմութիւնը եւ քննադատութիւնները յայտարարելու սպառնալիքին մասին հարցումի մը պատասխանելով, Մըր ըսաւ, որ այս գծով կառավարութիւնը օգտուած է Միացեալ Նահանգներու դէմ Սեպտեմբեր 11ի դէպքերու անդրադարձներէն:

Մըր նշեց, որ դէմ է քաղաքապետութեանց նոր օրէնքի նախագիծին մէջ տեղ գտած Պէյրութի նահանգապետի պաշտօնը ջնջելու եւ վայն Լեռնայի խաւանի նահանգապետին միացնելու առաջարկին:

Մըր ըսաւ, որ այս ընդդիմութիւնը համայնքային դրդապատճառ չունի եւ ոչ ալ յոյն ուղղափառներու դիրքը պահպանելու դիտաւորութիւն, «այլ պարզապէս ի՞նչպէս կարելի է մեկ նահանգապետ նշանակել երկու նահանգի»: Ան նաեւ ըսաւ, որ իշեալ օրինագիծին առնչութեամբ իր բոլոր վերապահութիւնները պիտի յայտարարէ, երբ անհկա հասնի խորհրդարան:

Պըրրի երէկ նաեւ ընդունեց արտերկրի լիբանանցի ներդրողներու խորհուրդը եւ Պէյրութի փաստաբաններու սենտիքայի նախագահ Միշէլ Լիանը:



**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ
ԳՐԱԽԱՆՈՒԹ**
ՑՐԻՈՒՄԻ ԴՐՈՒԹԻՒՆ

Համազգայինի գրախանութը Դեկտեմբեր 2001էն սկսեալ, տուններու եւ գրասենեակներու համար հաստատած է թերթերու, շաբաթաթերթերու եւ գրասենեակներու համար ցրումի դրութիւն, Պուրճ Համուտէն Անթիլիաս, Մըրաշ, Պալմ, Ռապիէ, Սըքալեյ, Էլիսար եւ Պէյթ Գօգօ շրջանները:

Առաւօտեան կանուխ ժամերուն ձեր տունը կամ գրասենեակը պիտի ստանաք ձեր նախընտրած թերթերը, շաբաթաթերթերը, պարբերաթերթերը եւ այլ հրատարակութիւնները:

Բաժանորդագրութեան եւ յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնէ՝
01-241 263/4 թիւերուն:

Համազգայինի գրախանութը ստանձնած է նաեւ Պուրճ Համուտ շրջանին մէջ L'agenda Cultureի ցրումի ներկայացուցչութիւնը:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
Հ.Յ.Դ. ԼԵՄԻ
2002Ի ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ



Հ.Յ.Դ. ԼԵՄ.



ՍՍԿ՝ 10.000 Լ.Ո.



NARRA TRADING
& GENERAL SERVICES CO. S.A.R.L.
ՆԱՐԱ ԹԵՔՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ս.Պ.Ը.
(Սեփականատէր՝ Վահէ Մանուկեան)
ԿԻԵԹՆԱՄԵՆ ԵԹՈՎՊԻԱՅԵՆ ՍՐԻ ԼԱՆԶԱՅԵՆ ԵՒ ՖԻԼԻԺԻՆԵՆ ՍՊԱՍՈՒՐԻՆԵՐՈՒ ԱՊԱՀՈՎՈՒՄ
● Անմիջական յանձնում եւ ապահովագրութիւն:
● Մեր ճշգրտաբան՝ անկեղծութիւն, ապահովութիւն,
● Մասնաւոր գիներ, վաճառման դիւրութիւն եւ երկար տարիներու փորձառութիւն:
Պաուլիէ, City Hospital հիւանդանոցի փողոց, «Էլի» Դրամատան շէնք, 4րդ յարկ: Հեռ. 03/324799, 01/897633 եւ 03/489989

www.lemagan.com

ԿԻՊՐՈՍԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՒ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐ

«Նոյեման Տապան» լրատու գործակալությունը կը յայտնէ, թէ Հայաստանի կառավարությունէն կողմէ որդեգրուած որոշումի մը ծիրին մէջ պիտի ստորագրուի «Հայաստանի կառավարութեան եւ Կիպրոսի կառավարութեան միջեւ զինուորական եւ արհեստագիտական համագործակցութեան» մասին զինուորական համաձայնագիր մը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՊԻՏԻ ՀԻՄՆՈՒՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«Կեսփիլը» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, թէ Հայաստանի մէջ Գերմանիոյ դեսպան Վոլքըր Զայց յայտնած է, որ Հայաստանի մէջ պիտի հիմնադրուի Եւրոպական համալսարանը: Նորաստեղծ համալսարանը պիտի հիմնուի 1998ին հիմնուած Հայաստանի Ֆրանսական համալսարանի հիմամբ: Եւրոպական համալսարանի ծրագրերին մէջ ներգրուած պիտի ունենան Գերմանիա եւ Իտալիա:

ՕԹԱՎԱՅԻ ՄԷՋ ՄԱՀԱՅԱԾ Է ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ ՄԱԼԱՔ ՔԱՐՇ

9 Նոյեմբերին Օթավայի հիւանդանոցներէն մէկուն մէջ 86 տարեկան հասակին մահացած է քանադացի հռչակաւոր լուսանկարիչ Մալք Քարշ: Թաղման արարողութեան ընթացքին դամբանական արտասանած է ծերակուտական Ռէյմոնտ Սեթլըք, որ Մ. Քարշի զարմիկն է: Ռ. Սեթլըք անցեալ Ապրիլին Քանատայի Մերակոյտին մէջ վկայած էր, թէ ինչպէս Հայկական Ցեղասպանութեան ժամանակ թուրքերը ջարդած են իր ընտանիքը: Նաեւ խօսք առած են Մ. Քարշի զաւակները, որոնք ցաւ յայտնած են, որ ոչինչ գիտեն իրենց հօր ծագումին մասին: Արարողութեան ընթացքին հայերէնով արտասանուած է «Հայր Մեր»ը:

Մ. Քարշ ծնած է 1915ին, Մերսին: Ան ֆանատա հաստատուած է 1937ին, ուր արդէն իսկ կը գտնուէր իր եղբայրը՝ Եոսուֆ Քարշ, որ նոյնպէս հռչակաւոր լուսանկարիչ է:

Մ. Քարշ մեծ ներգրուած ունեցած է ֆանատայի լուսանկարչական արուեստին մէջ: Անոր գործերէն մէկը տպուած է քանատական մէկ տոլարին վրայ: Անոր նկարած Օթավայի կակաչները այնքան հռչակաւոր եղած են, որ կակաչի տեսակ մը անուանուած է իր անունով: Մ. Քարշ հիմադրեալներէն է ֆանատայի կակաչի փառատօնին: Ան նաեւ մեծապէս նպաստած է գաղութին հայկական կազմակերպութիւններուն: 1995ին Մ. Քարշ պարգեւատրուած է «Քանատայի կարգ» շքանշանով:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՓՐԻԿԵՒ ՄԷՋ ՀԱՅ ԵՐԵՒԱՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԾ ԵՆ ԱՊԱՍՏԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄ

Հարաւափրիկեան «Նիուզ 24» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ 1994 - 2001 տարիներուն Հարաւային Ափրիկէի մէջ ապաստանելի իրավիճակի դիմում ներկայացուցած են 1822 երեխաներ, որոնք եկած են բազմաթիւ երկիրներէ, որոնց շարքին նաեւ՝ Հայաստանէն:

Երեխաներէն ոմանք կ'ընկերակցէին իրենց ծնողներուն, մինչ ուրիշներ յանձնուած էին ՄԱԿի Գաղթականներու յանձնաժողովի հոգածութեան: Յստակ չէ, թէ քանի՞ երեխայ ստացած է ապաստանելի իրավիճակ:

ԿԸ ՆՈՒՒՐԵՆ

●Ատուր Տեմիրճեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի Սուրբ Սարգիս եկեղեցւոյ կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները.

Հոփսիմէ Բաղիկեան 10,000 լ.ո., տիկիՆ Սուտու Իլիսա Շիրա 20,000 լ.ո., տէր եւ տիկիՆ Մանուէլ Մանուէլեան 10,000 լ.ո., Ստեփանեան ընտանիք 5,000 լ.ո., «Նաժուա» հաստատութիւն 50 \$, Վրէժ Տալուլեան եւ Մանուշակ 2000 լ.ո., Ժրժէ ֆայսլա եւ ընտանիք 10,000 լ.ո., Հաթէմ Հատտաւ 15,000 լ.ո., Հապիպ Տաղէր 15,000 լ.ո., Մանուշակ Չամիշեան եւ ընտանիք 15,000 լ.ո., «Վարդաճանց» եկեղեցւոյ դպրաց դաս 10,000 լ.ո.:

●Ժիրայր Արթինեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի Սուրբ Սարգիս եկեղեցւոյ եղած են հետեւեալ նուիրատուութիւնները.

«Five M» հաստատութիւն 50 \$, Զէվահիրճեան ընտանիք 20,000 լ.ո., Ժորժ Բիսմէ 20,000 լ.ո., Բօլ եւ Բիսմէ 10,000 լ.ո., Անթուան Ապտուշ եւ ընտանիք 20 \$, Զէմիլ Մասուտու 10,000 լ.ո., Ժորճէ Զըրհան 10 \$:

ՀԱՐԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՅՏԵՆ

HAMPIG SASSOUNIAN
CSP - L.A.C. B - 5 - 131 44750
60-TH ST. WEST LANCASTER,
CA, 93536 — USA

ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Համաձայն դեռեւս 19րդ դարում ձեւաւորուած մի տեսութեան, անապատները առաջանում են մարդու անհեռատես գործունէութեան հետեւանքով, իսկ այս ոլորտի անուանի մասնագէտներ Սթոքտէյլի (Մեծ Բրիտանիա), Պոլմանի (Միացեալ Նահանգներ) եւ Սթիւսի (Հոլանտա) կարծիքով՝ «անապատները անխուսափելի յարձակումը մարդկութեան ոչնչացման պատճառն է դառնալու»:

Նալրուպիում (Քենիա) 2000 թուականի Մայիսին գումարուած «Կենսաբազմազանութեան մասին» համաձայնագրի կողմ պետութիւնների 5րդ համագումարի ժամանակ ստորագրուել է «Կենսաբանական անվարձանագրութիւնը եւ ընդունուել անապատացման համաշխարհային քարտէսը: Վերջինիս համաձայն, համապատասխան միջոցներ չձեռնարկելու դէպքում, աւազի թագաւորութիւնը կարող է ծածկել մեր մոլորակից քաճաքի 1/3ը եւ ազդել բնակչութեան մօտ 15 տոկոսի վրայ: Այդ իսկ պատճառով, այսօր անապատացման հիմնախնդիրը մտահոգում է բազմաթիւ երկրների, եւ չափազանց հրատապ է դառնում այս հիմնահարցին գիտական բազմակողմանի մօտեցում ցուցաբերելու անհրաժեշտութիւնը:

Անապատացման գործընթացներ տեղի են ունենում նաեւ մեր սակաւահող հանրապետութիւնում, որը կարելի է ամբարել կլիմայական համադրութիւնների երկիր: Հայաստանը գտնուում է մերձարեւադարձային կլիմայական գոտու կենտրոնական ցամաքային հատուածում եւ արդէն իսկ պէտք է ունենար անապատային-կիսաանապատային կլիմայ: Սակայն այդպէս չէ, քանի որ անհամար լեռները իրենց դրոշմն են թողել երկրի կլիմայական պատկերի վրայ:

Նշենք, որ Հայաստանի անապատային-կիսաանապատային գոտին զբաղեցնում է հանրապետութեան տարածքի մօտ 10 % (ըստ երկրի կենսաբազմազանութեան առաջին ազգային զեկոլոգի) եւ տարածուած է 700 մեթրից մինչեւ 1200-1300 մեթր բարձրութեան վրայ: Մեծ մասամբ կիսաանապատային գորշահողերով ծածկուած նման տարածքների կարելի է հանդիպել Արարատեան դաշտում (մինչեւ 900 մեթր բարձրութիւններում) եւ նրան յարող նախալեռնային շրջաններում (մինչեւ 1200-1300 մեթր, որոշ տեղերում՝ 1400 մեթր բարձրութիւններում), Արաքսի ու նրա վտակների՝ Հրազդանի, Քասախի գետաբերկնների վրայ:

Վայոց Ձորի ցածրադիր գոտում, Մեղրու կիրճում եւ այլուր (վերջիններս հիմնականում փոքրիկ տեղամասեր են)՝ թուարկածները յատկապէս մեծ տարածութիւն (200 հեկտար) են զբաղեցնում Արարատեան գոգաւորութիւնում, Վեդի գետի ձախափին, 1100-1200 մեթր բարձրութեան վրայ գտնուող Գորոփան աւազուտները, ուր դեռեւս 1958 թուականից կազմաւորուել է արգելավայր: Այստեղ կարելի է հանդիպել հազուագիւտ ու անհետացող աւազաւթ բույսերի (օրինակ՝ կազը, գեղածնկիկ մատիտեղանմանը եւ այլն), ինչպէս նաեւ մի շարք անողնաշարաւորների, որոնց մի մասը մեր հողազնուում տարածուած է միմիայն այս վայրում: Գորոփանի կենսոլորտային համակարգի հետազայ գոյութիւնը վտանգուած է, քանի որ շահագործւում է տեղի աւազահանքը, որից այս եզակի արգելավայրը մեծապէս տուժում է:

Հայաստանի անապատային կիսաանապատային գոտու հողերում բուսահողի պարունակութիւնը չի անցնում 12 տոկոսից: Նման հողերում դաշտավարութիւնը եւ ալգեգործութիւնը հնարաւոր են միայն արհեստական ոռոգման դէպքում, այդ իսկ պատճառով 8090 %ով իւրացուած կիսաանապատային գոտին, մեր հանրապետութիւնում առաւել վերանորոգուած է:

Զմեղանչելով ճշմարտութեան դէմ՝ արձանագրենք, որ անապատացման գործընթացները նորութիւն չեն Հայաստանի, յատկապէս Արարատեան դաշտավայրի եւ մերձակայ շրջանների համար: Վերջին հազարամեակներում մեր շրջանի տարածքները բազմաթիւ լուրջ փոփոխութիւններ են կրել (ըստ պատմական երկրագիտութեան, հնէաբուսաբանութեան, հնէակենդանաբանութեան եւ պատմութեան տեւալեռների): Անտառային, ալպեան եւ մերձալպեան գոտիների կրճատման հաշուին բաւականին ընդարձակուել են տափաստանային ու անապատային-կիսաանապատային տարածքները: Վերջին տասնամեակների ընթացքում, յայտնի պատճառներով, փոքրիկ անապատներ են առաջացել նաեւ Սեւանայ լճի մերձակայքում: Այդ տարածքներում գերակշռում է աւազաւթ բուսականութիւնը: Սեւանայ լճի հիմնահարցը տնտեսութեան եւ անապատացման գործընթացների փոխկապակցուածութեան իւրօրինակ դրսեւորումները է: Լճի չորացման արագ թափը

(ըստ Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի ջրային միջավայրի եւ ձկնաբանութեան հիմնարկի տուեալների) կարող են նպաստել անապատների առաջացմանը եւ լճի աւազանում, եւ շրջանում:

Հայաստանում ընթացող անապատացման դրսեւորումների հիմնական չափանիշներն են՝ հողագոյացման գործընթացի բնոյթի փոփոխութիւնը, կենսաբազմազանութեան նուազեցումը (ներկայումս երկրի տարածքում հանդիպող 17,000 անողնաշարաւոր եւ 493 տեսակի ողնաշարաւոր կենդանիներից չուրջ 300ը հազուադէպ հանդիպող են, իսկ 35 տեսակի բույսեր արդէն իսկ անհետացել են հանրապետութիւնից) հեղեղաբերութեան եւ մաշումի գործընթացի աշխուժացումը (երկրի տարածքի աւելի քան կէսը եւ գիւղատնտեսական հանդակները չուրջ 35 տոկոսը են թարկուած են մաշումի), ցանքատարածութիւնների արդիւնաւէտութեան իջեցումը եւ բուսահողի պարունակութեան նուազեցումը: Թուարկուած ու մի շարք այլ չափանիշներին գումարում է նաեւ մարդու՝ օրէցօր աճող եւ յաճախ անտեղի ներգործութիւնը բնութեան վրայ:

Ըստ Հայաստանի անապատացման ենթարկուող շրջանների քարտէսի տուեալները, այսօր անապատացման գործընթացները չեն սպառնում երկրի տարածքի սոսկ 13,5 տոկոսին (4,006 քառ. քմ.): Հայաստանի տարածքի մօտ 81,9 տոկոսը (24,353 քառ. քմ.) այս կամ այն չափով ենթարկուած է անապատացման, ընդ որում. խիստ՝ 26,8 տոկոսը, ուժեղ՝ 26,4 տոկոսը, միջին աստիճանի՝ 19,8 տոկոսը եւ համեմատաբար թույլ՝ 8,8 տոկոսը:

Վերոյիշեալ թուերը չափազանց մտահոգիչ են: Թերեւս բնաւ էլ պատահական չէ, որ Երեւանի Պետական համալսարանում 2000 թուականի Մայիսի 23ից 29ը տեղի է ունեցել միջազգային գիտաժողով «Անապատացման գործընթացի կենսաբազմազանութեան եւ կենսոլորտային հայեցակէտները չորային եւ կիսաչորային շրջաններում» թեմայով: Այդ, այս հիմնախնդիր լուծումը պահանջում է ջանքերի միաւորում եւ անապատացման դէմ պայքարի իրական համալիր ծրագրի մշակում:

Մենք չունենք այնքան շատ բերրի հող, որպէսզի թողնենք, որ նրա թէ՛ կուզեն մի փոքրիկ մասը ծածկի անապատը:

ԱՐՏԱԿ ՄԱԿԱԵԱՆ

«Երկիր»

«ԱՁԴԱԿ»Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր աճող, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է ընագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵՒ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 5:00:

ՄԱՀԱՁԴՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան առեւ որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՇԱՏ ԲԱՆ ԿԱՆՈՒԱԾ Է ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱԽՐՈՒԱԾՈՒԹԻՒՆԻՑ

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ՝ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈՒՆ ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ ՀԵՏ

ՊԱՏԱՍԽԱՆ՝ Իմ անձնական վերաբերմունքը հետեւեալն է. Հայաստանը պէտք է երկխօսութիւն ունենայ Թուրքիայի հետ որպէս հարեւան պետութեան՝ պաշտպանելով իր սկզբունքները եւ որոշակի պատմական իրողութիւնների վրայ հիմնուած դիրքորոշումները: Խնդիրն այն է, որ այս գործընթացում, եթէ Հայաստանն, իրօք, առաջ նախապայմանների յայտարարում է երկխօսութեան զարգացում, պէտք է լինի նաեւ ոչ կառավարական կազմակերպութիւնների եւ անհատների, համայնքների եւ համայնքների ներկայացուցիչների մասնակցութիւնը: Բայց միջպետական գործընթաց եւ չեմ տեսնում, եւ այն գոյութիւն չունի: Այս պարագայում, երբ ինչ-որ յանձնաժողով է ստեղծուում, որոշակի բարդութիւններ են առաջանում, եւ բոլորս էլ ակնառես եղանք այդ բարդութիւններին:

Նախ, յանձնաժողովի անուանումը չի համապատասխանում յիշեալ գործընթացին: Ես կը համարէի այն երկխօսութիւն մտաւորականների միջեւ: Երկրորդ, ստեղծուած յանձնաժողովում կազմակերպութիւնների ներկայացուցիչների մասնակցութիւնը, կարծում եմ, անտեղի էր, որովհետեւ, եթէ իրօք ունենայինք մտաւորականների երկխօսութիւն, եւ մասնակիցներն էլ իսկապէս մտաւորականներ լինէին, պետական ազդեցութիւններին եւ կուսակցական պատկանելութիւնից անկախ, միգրացի կարելի էր սա ընկալել որպէս ինչ-որ գործընթացի սկիզբ:

Հ.- Միջպետական գործընթաց չկայ, բայց տարբեր միջազգային առեւտրային անհասկանալի հիմունքներով ձեւաւորուած այդ յանձնաժողովը վկայակոչում է իբրեւ հայ-թրքական հաշտեցման գործընթաց, որին չարժէ խանգարել՝ Ցեղասպանութեան առջնուղ ինչ-ինչ խնդիրներ արժաւորելով:

Պ.- Վտանգաւորը հէնց դա է, որ տարբեր առեւտներում, երբ բարձրացնում են Ցեղասպանութիւնը ճանաչելու խնդիրը (լինի դա Գերմանիայում, Եւրոխորհրդարանում եւ այլն), ասում են, թէ հայերն ու թուրքերը արդէն նստել են բանակցութիւններին: Բայց ինչպէս Հայաստանի կառավարութիւնը, արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարեցին, այդ յանձնաժողովին նման կարգավիճակ կամ լիազօրութիւններ պետութեան կողմից տրուած չեն:

Հ.- Հայկական համայնքը, ձեր գնահատմամբ, ի՞նչպէս է վերաբերում այդ յանձնաժողովի գոյութեան փաստին, չհաշուած, ի հարկէ, Ամերիկայի Հայկական Համագումարը, որի վերաբերմունք այդ հարցում յայտնի է:

Պ.- Տարբեր կարծիքներ կան ամերիկահայ համայնքում: Ի հարկէ, մեծամասնութիւնը, կարծում եմ, քննադատում է այդ գործի ընթացքը: Եսնք կարող ասել նաեւ, թէ Հայկական Համագումարը հակահայ գործունէութիւն է ծաւալում: Ի վերջոյ, 30ամեայ կազմակերպութիւն է, իր լուրջ ներգրումներով նկատի ունենանք, օրինակ, Ցեղասպանութեան թանգարանի կազմակերպումը այդ կազմակերպութեան կողմից Ուաշինկթոնի կենտրոնում: Նաեւ հաշուի առնենք, որ Հայկական Համագումարում մեծ թուով հին ամերիկահայութեան ներկայացուցիչներ կան, որոնք իրենց մօտեցումներով աւելի մօտ են վարչակազմի տեսակետներին եւ քաղաքականութեանը:

Նորից են կրկնում. յարգելով եւ գնահատելով այդ կազմակերպութեան 30ամեայ գործունէութիւնը, միաժամանակ հարկ է նշել, որ այս հարցում իրենց մասնակցութիւնն, իրօք, որոշակի խնդիրներ է առաջացրել համայնքում: Ես մի քանի անգամ կոչ եմ արել ամերիկահայութեանը եւ 2 խալիստական մեծ կազմակերպութիւններին՝ լինել զգոյս, սթափ եւ չխորացնել այս հակամարտութիւնը, որ գոյութիւն ունի: Որովհետեւ Հայաստանն, ի վերջոյ, փոքր երկիր է, եւ շատ բան կախուած է նաեւ այդ կազմակերպութիւնների գործունէութիւնից եւ ամերիկահայ համայնքի համալրուածութիւնից:

Հ.- Հայկական համայնքն անհանգստացած չէ՞ 907 բանաձեւում կատարուած շտկումներից:

Պ.- Անհանգստութիւնը հետեւեալն է. 907 ենթաբաժինը շատ աւելի քաղաքական, քան պրակտիկ նշանակութիւն ունի: Ինչո՞ւ. որովհետեւ Միացեալ Նահանգների վարչակազմը, նկատի ունենալով Ազգայնական կարեւորութիւնը տնտեսական իմաստով, քարիւղի գործօնը եւ այլն, ժամանակի ընթացքում փորձել է տարբեր ձեւերով շրջանցել բանաձեւում դրուած արգելքները եւ չէզոքացնել 907ի գործունէական նշանակութիւնը: Բայց մեզ համար դա շատ կարեւոր քաղաքական նշանակութիւն է ունեցել, որովհետեւ սեւեռով սպիտակի վրայ գրուած էր. չօգնել, չաջակցել մի երկրի, որը շրջափակում է Ղարաբաղը եւ Հայաստանը: Սա արգելել է Ազգայնականին ինչ-որ (այդ թուում՝ ռազմական) գործողութիւնների դիմել Ղարաբաղի դէմ:

Վարչակազմը վաղուց էր փորձում ընդհանրապէս վերացնել 907 բանաձեւը, բայց համայնքի ջանքերով, ու նաեւ մեր միջամտութեամբ, հնարաւոր դարձան քանակ ժամանակաւոր կասեցման: Մենք իրաւունք չունենք միջամտելու այդ երկրի ներքին օրէնսդրական գործերին: Կայ համայնք, կան օրէնսդիր մարմինի հետ յարաբերութիւններ, բայց Միացեալ Նա-

Շառ.ն՝ 59 8

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

Հոլանտայի Ֆրետերիք Հենտրիք իշխանի գահակալութենէն ետք հայ - հոլանտական յարաբերութիւնները նոր հանգրիւան մը թեւակոխեցին, երբ Հոլանտայի եւ Արեւելքի միջեւ առեւտրական գործառնութիւնները մեծապէս աշխուժացան, եւ շատ մը հայ առեւտրականներ մնայուն բնակութիւն հաստատեցին Ամսթերտամի մէջ, ուր անոնք առեւտրական նոր տուններ հիմնեցին եւ իրենց նաւերը հոլանտական դրօշակով օժտելով՝ աւելի զարկ տուին առեւտուրին։ Այս ժամանակ նաեւ առեւտրական կապեր հաստատեցան Պարսկաստանի եւ Հոլանտայի միջեւ, որոնց շնորհիւ ջուղայեցի հայ վաճառականներ սերտ յարաբերութիւն մշակեցին Հոլանտայի հետ, եւ անոնցմէ շատեր Ամսթերտամի մէջ բնակութիւն հաստատեցին։

Հոլանտացիք հայերուն հետ յարաբերութիւն հաստատեցին նաեւ Հնդկաստանի եւ յարակից կղզիներուն մէջ, ուր հայ առեւտրականներն ու Հոլանտական Արեւելեան Հնդկական Ընկերութիւնը գործընկերներ դարձան։

Ֆրետերիք Հենտրիք ՀՈԼԱՆՏԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ

Հոլանտայի ղեկավար Մորիս իշխանի մահէն ետք (1625ին) անոր յաջորդեց իր խորթ եղբայրը՝ Ֆրետերիք Հենտրիք (Հենրի)։ Ան ծնած է 29 Յունուար 1584ին, Տելֆթ, հօր՝ Վիլլէմի մահէն քանի մը ամիս առաջ։

Վիլլէմի սպանութենէն ետք (1584 Յուլիս) կիւր՝ կասփար տը Քոլիկնի, որ հուկուէնօ էր (Ֆրանսացի բողոքական), գաւազը՝ Ֆրետերիք Հենտրիքը առնելով Ֆրանսա մեկնեցաւ։ Ֆրետերիք Հենտրիք մանկութիւնը անցուց Ֆրանսայի իր օրբնական կալուածին մէջ եւ մօր շունչին տակ դաստիարակուեցաւ իբրեւ հաւատացեալ բողոքական։

Մորիս իշխան 1590ական տարիներուն Սպանիոյ դէմ ազատագրական պատերազմի ձեռնարկած էր, եւ Սլանտրիոյ ու Պրասպանթի սահմաններուն վրայ արինահեղ կռիւներ կը մղուէին։ այս ժամանակ ան խորթ եղբայրը հրաւիրեց վերադառնալու եւ ծառայելու հայրենիքին։ Մեծ եղբոր հրաւերին ու թելադրանքին ընդառաջելով՝ տակաւին պատանի Ֆրետերիք Հենտրիք վերադարձաւ Հոլանտա, Լէյտընի համալսարանը ուսանելու մտաւ եւ 17 տարեկանին՝ 1601ին պետական խորհուրդի անդամ ընտրուեցաւ։

Հոլանտական բանակը 1601էն սկսեալ ծանր պարտութիւններ կրելով՝ նահանջի ճամբան բռնած էր, մեծ գետերու դաշտավայրերուն մէջ կատաղի կռիւներ կը մղուէին, եւ սպառնացիք կը սպառնային հիմնովին ջախջախել հոլանտական զօրքերը։ այդ օրերուն Ֆրետերիք Հենտրիք իր եղբոր կողքին պատերազմի դաշտ իջաւ, մասնակցեցաւ զինուորական բազմաթիւ եւ յաճախ վտանգաւոր արշաւանքներու եւ հակառակ բոլոր նեղութիւններուն, միշտ ալ եղբօր կողքին մնաց։ Ան միաժամանակ եղբօր կողմէ արտաքին առաքելութիւններու ղրկուեցաւ։

Հոլանտայի եւ Սպանիոյ միջեւ 1609ին կնքուած դաշինքը քանի մը տարուան խաղաղութիւն բերաւ Հոլանտայի, բայց 1617ին ծայր առին կրօնական եւ քաղաքական տագնապներ՝ բողոքական տարբեր համայնքներու ու ազնուական տուներու միջեւ։ Մորիս իշխան զօրք իջեցուց կարգ ու կանոն պարտադրելու համար։ Ֆրետերիք Հենտրիք եւ իր մայրը՝ կասփար տը Քոլիկնի կողմնակից էին միջին լուծումի եւ մեծ աշխատանք տարին տագնապը խաղաղութեամբ կարգաւորելու համար, բայց ապարդիւն։ Ներքին այդ կռիւները շարունակուեցան մինչեւ 1619, իսկ Մորիս իշխան 1621ին վերսկսաւ Սպանիոյ դէմ պատերազմը։

Ֆրետերիք Հենտրիք քառասուն տարիքը թեւակոխելէն ետք ամուսնացաւ պոհեմիացի իշխանուհիի մը հետ։ Ծատ չանցած եղբայրը՝ Մորիս իշխան մահացաւ 1625 Ապրիլին։

Մորիս իշխանի մահէն ետք Ֆրետերիք Հենտրիք եօթը նահազներէն հինգին ղեկավարը հռչակուեցաւ (նշենք, որ վեցերորդ նահազը՝ կրոնիկըն անոր միացաւ 1640ին, իսկ Ֆրիզլանտայի ղեկավարութիւնը հետագային անցաւ անոր գաւկին՝ Վիլլէմի)։

Ֆրետերիք Հենտրիք որոշեց շարունակել եղբօր քաղաքականութիւնը եւ Սպանիոյ դէմ պատերազմը։ Հոլանտայի համար կենցաղ մահու օրեր էին. սպանացիք 1625ի տարեսկզբին գրաւած էին Պրետայի մեծ ամրոցը եւ կը սպառնային ներխուժել հոլանտական դաշտավայրեր. կացութիւնը աւելի ճակատագրական դարձաւ, որովհետեւ Աւստրիոյ Հապսպուրկները, սպանացի իրենց տոհմակիցներուն միացած (Սպանիոյ գահը այդ ժամանակ Հապսպուրկներու մէկ ճիւղին կը պատկանէր) պայաքարի մէջ էին գերմանացի բողոքական իշխանութիւններուն դէմ եւ վախ կար, որ աւլստրիական ու սպանական միացեալ զօրքեր կրնային ներխուժել Հոլանտա եւ գրաւել զայն։

Ֆրետերիք Հենտրիք միաժամանակ զինւած ուժերու ընդհանուր հրամանատար հռչակուեցաւ. ան արդէն բաւական փորձառութիւն ունէր զինուորական արուեստին մէջ, եւ յաջող մարտավարութեամբ մը վերաւելքի հետ Հոլանտայի առեւտրական կապերը աւելի ընդարձակեցին։ Ամսթերտամէն ամբողջ

Ֆրետերիք Հենտրիքի ԺԱՄԱՆԱԿԱԶՐՁԱՆԻՆ

ՀԱՅ ԱՌԵՒՏՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՀՈՍՔ ԴԷՊԻ ԱՄՍԹԵՐՏԱՄ

ՀՈԼԱՆՏԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՆՈՐ ՈՒՂԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՐԱՒ - ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՍԻԱ

ըուն հոլանտական նաւատորմը ջախջախիչ յաղթանակներ տարաւ սպանական նաւատորմին դէմ։

ՀՈԼԱՆՏԱՅԻ ՀԵՏ ՕՏԱՐ ՆԱԽԵՐՈՎ ԿԵՏԱՐՈՒՈՂ ԱՐԳԵԼՔԻՆ ՊԱՏՃԱՌՈՎ՝ ՀԱՅ ԱՌԵՒՏՐԱԿԱՆՆԵՐ ԱՄՍԹԵՐՏԱՄ ՄԵՁ

Այս ժամանակ հոլանտական եւ օսմանեան իշխանութիւնները լուրջ վէճի մէջ էին. թրքական իշխանութիւնները սկսած էին խուզարկել եւ գրաւել հոլանտական նաւերը, այն մեղադրանքով, որ անոնք օտար արտադրութիւններ կը մտցնեն թուրքիա, այսինքն՝ այն երկիրներէն ապրանքներ, որոնց հետ Բարձրագոյն Դուռը դաշնագրի չէր կնքած, իսկ թուրք - հոլանտական դաշինքով հոլանտացիք արտօնութիւն ունէին մտցնելու միայն իրենց երկրին արտադրութիւնները։

Օսմանեան կառավարութեան այս որոշումը մեծ հարուած հասցուց հոլանտական րտելտուրին եւ նահանգներու հաւաքին որոշումով 1625ին Ամսթերտամի մէջ հիմնուեցաւ «Մերձաւոր Արեւելքի Առեւտուրի եւ Միջերկրական Մոպու Նաւագնացութեան վարչութիւն» անունով հաստատութիւնը, որուն պարտականութիւնն էր սկիզբէն քննել Մերձաւոր Արեւելք գացող բոլոր նաւերը՝ ստուգելու համար անոնց բեռներուն պարունակութիւնը, այսինքն՝ ապրանքին ուրկէ՞ բերուած ըլլալը եւ որո՞նք պատկանիլը, եւ ըստ այնմ ալ՝ բեռնագիր ու անցագիր տալ։ Այս հաստատութիւնը նաեւ կարեւոր դեր խաղաց ծովահէններու չահատակութիւններուն դէմ։

Այնուհետեւ նաւագնացութիւնը աւելի զօրացնելու նպատակով հոլանտական կառավարութիւնը հաստատեց նոր օրէնք մը, որուն հիմամբ բացարձակապէս կ'արգիւտէր օտար նաւերով թուրքիայէն եւ Պարսկաստանէն Հոլանտա ապրանք բերել։ Այս կարգադրութեան պտճառով՝ բազմաթիւ վաճառականներ, որոնք ոչ հոլանտական նաւերով ապրանք կը ներածէին կամ կ'արտանւէին Հոլանտայի հետ,

նաւատորմեր ճամբայ կ'ելլէին Մերձաւոր Արեւելքի նաւահանգիստները, հոլանտական գործարաններու արտադրութիւններ կը տանէին եւ Արեւելքէն ալ տեղական բերքեր ու ապրանքներ բեռուցած՝ կը վերադառնային։

ՊԱՐՍԿԱՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԱՄՍԹԵՐՏԱՄ ՇՈՒԿԱՅԻՆ ՄԵՁ

Ամսթերտամ բնակութիւն հաստատած հայերուն մէջ կարեւոր համեմատութիւն կը կազմէին ջուղայեցիները, որոնք 1604ի շահ Աբասի բռնագաղթէն ետք Պարսկաստան հաստատուած եւ հոնկէ Ամսթերտամ գաղթած էին. այդ պատճառով ալ անոնք հոլանտացիներուն կողմէ ծանօթ էին «քրիստոնեայ պարսիկներ» անունով, մինչ թուրքիայէն գաղթած հայերը առաւելաբար ծանօթ էին «քրիստոնեայ զմիւռնիացի» անունով։

Առաջին անգամ Ամսթերտամ հաստատուած ջուղայեցի վաճառականները բնականաբար անձանօթ էին տեղական լեզուին ու պայմաններուն, հետեւաբար ստիպուած՝ միջնորդի ու թարգմանի կարիքը ունէին։ Այդ դերը ստանձնեցին անոնցմէ առաջ Ամսթերտամ հաստատուած քանի մը պարսկագէտ հրեաներ։ Ամսթերտամի 1626ի քաղաքային արձանագրութիւններուն մէջ յիշուած է իսահակ իսամայս անունով հրեայ մը, որ ամբողջութեամբ նուիրուած էր Ամսթերտամի անստղ վաճառականներու ծառայութեան։ Այն հայ վաճառականներուն բերած ապրանքները ծախած է անձնապէս եւ կամ միջնորդներու միջոցով։ Իսահակ նաեւ միջնորդութիւն կը կատարէր հայ եւ հոլանտացի վաճառականներու միջեւ, հաշիւներու կարգադրութեան, դրամի գանձման եւ այլ գործերու, ինչպէս նաեւ քաղաքային վարչութեան հետ յարաբերութիւնները կը կարգաւորէր։ Ան նաեւ միջնորդի դեր կատարած է հայ վաճառականներու միջեւ ծագած տարակարծութիւնները լուծելու համար։ Հայ առեւտրականներու հետ աշխատանքը այնքան շահաբեր եղած է, որ իսահակ իսամայս ուրիշ ամէն զբաղում մէկ կողմ դնելով՝ միայն հայերուն հետ աշխատած է եւ առատ վարձատրութիւն ստացած է անոնցմէ։

Բայց յետոյ Ամսթերտամ հասան ուրիշ հայ վաճառականներ, որոնք մեծ մասամբ ուսեալ էին, հայերէնի կողքին գիտէին նաեւ իտալերէն եւ Ֆրանսերէն եւ այդ լեզուներով կ'աշխատէին հոլանտացիներուն հետ։ Հակառակ անոր որ հայ վաճառականները օտար լեզու գիտէին, բայց անոնք սովորութիւն ունէին ստորագրութեան փոխորէն իրենց անուանական կնիքները դնելու։

ՀԱՅ-ՀՈԼԱՆՏԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՍԵՐՏ ԿԱՊԵՐ

Հոլանտացի առեւտրականները 1602ին Հոլանտական Արեւելեան Հնդկաստանի Ընկերութիւնը հիմնած էին, Հնդկաց ովկիանոսին մէջ իրենց առեւտրական գործունէութիւնը կանոնաւորելու, օտար մրցակիցներու դէմ պաշտպանուելու եւ օգնելու համար իրենց հայրենիքին՝ Սպանիոյ դէմ անկախութեան պատերազմին։ Ընկերութիւնը կարճ ժամանակի ընթացքին առեւտրական, քաղաքական եւ ծովային հզօր ուժ դարձաւ։ Հոլանտական կառավարութիւնը իր կողմէ երաշխաւորած էր ընկերութեան գործունէութիւնը եւ Բարեկուսոյ հրուանդանէն մինչեւ Մակելլանի նեղուց տարածուող ջուրերուն եւ նաւահանգիստներուն վրայ ընկերութեան տուած էր մենաշնորհ, ըստ որուն, անիկա Հոլանտայի անունով կրնար դաշինքներ կնքել տեղական իշխանութիւններուն հետ, ամրոցներ կառուցել եւ բանակ պահել, դիւանագիտական յարաբերութիւնները մշակել եւ այլն։ Ընկերութիւնը ունէր իր ընդհանուր կառավարիչը։ Տարիներու ընթացքին ամէնէն աւելի աշխուժ գործունէութիւն ունեցան կառավարիչներ ժան Փիէթրսզուլն Քոէն (1618էն 1623) եւ Անթոնի վան Տիեմըն (1636էն 1645)։ Անոնց օրով Հոլանտական Արեւելեան Հնդկաստանի Ընկերութեան նաւատորմը Հնդկաց ովկիանոսին մէջ նուաճեց բրիտանական նաւատորմը եւ մեծ հարուած հասցուց փորթուգալական նաւատորմին։ Հոլանտական Արեւելեան Հնդկաստանի Ընկերութիւնը այնքան զօրացաւ, որ Ատլանտեանի վրայ, Ամերիկայի եւ



Ֆրետերիք Հենտրիք

Այս ժամանակ Հոլանտական Արեւելեան Հնդկաստանի Ընկերութիւնը այնքան ընդարձակած էր իր գործունէութիւնը, որ Հնդկաց ովկիանոսի կղզիներուն բոլոր արտադրութիւններն ու բերքերը Ամսթերտամ կը փոխադրէր. ընկերութեան գլխաւոր խարխալը ծաւա կղզիին ծաքարթա աւանն էր, որ 1619ին վերանուանուած էր Պաթաւիա անունով։ Առեւտրական իր գործառնութիւնները աւելի ընդարձակելով՝ ընկերութիւնը որոշեց Պարսկաստանի հետ եւս յարաբերութիւն հաստատել եւ այդ նպատակով ալ ժան Լուքաս վան Հասսէլթը ուղարկեց պարսից շահին մօտ՝ բանակցելու համար։

Ժան Լուքաս վան Հասսէլթ երկար բանակցութիւններէ ետք համոզեց շահին կառավարութիւնը, որպէսզի քաղաքական եւ առեւտրական դաշինք կնքէ Հոլանտայի հետ, ինչպէս որ կնքած էր թուրքիա։ Հասսէլթ կ'ուզէր կանխել փորթուգալցիները, որոնք թափանցած էին Պարսից ծոց եւ մրցումի մէջ էին հոլանտացիներուն հետ։

Բանակցութիւններու իբրեւ արդիւնք՝ պարսկական կառավարութիւնը 1626ին իբրեւ դեսպան Հասսէլթի հետ Ամսթերտամ զրկեց Մուսա բէկը, անոր իբրեւ օգնական տալով Հիւսէյն բէկը, որ «շահին վաճառականը» տնտղոսը կը կրէր իր առեւտրական յաջող գործունէութեան համար։

Ամսթերտամ հասնելով՝ հոլանտական կառավարութիւնը պարսիկ պատգամաւորներուն հետ բանակցելու պարտականութիւնը յանձնեց Հոլանտական Արեւելեան Հնդկաստանի Ընկերութեան՝ թարգմանի՝ պաշտօնը հրեայի ու յանձնելով։

Սակայն բանակցութիւնները յաջող արդիւնք չտուին, որովհետեւ պարսիկները հոլանտացիներու առաջադրած պայմաններուն համաձայնութիւն չտուին, այնպէս որ, սպասւած դաշինքը չկնքուեցաւ։

Այդ օրերուն պարսիկ պատուիրակներէն Հիւսէյն բէկ Հոլանտական Արեւելեան Հնդկաստանի Ընկերութեան հաշուոյն ռալլկեանք կը վարէր Ամսթերտամի մէջ, այնպէս որ ընկերութիւնը անկէ պահանջեց, որ շաքաթական յիսուն Ֆլորինէն աւելի չծախսէ, թէեւ յետոյ ստիպուած եղաւ լիովին գոհացում տալու անոր։ Հիւսէյն բէկ իրեն հետ Ամսթերտամ բերած էր պարսկական ապրանքներ, գլխաւորաբար՝ մետաքսեղէն, եւ լաւ գիներով ծախեց գանոնք ու փոխարէնը հոլանտական արտադրութիւններ գնեց՝ հետը Պարսկաստան տանելու համար։

Ի վերջոյ, երբ որեւէ համաձայնութիւն չգոյացաւ, հոլանտացիք պարսիկ պատուիրակները նաւ հղելով հնդկական գաղթավայրեր ուղարկեցին, ուրկէ անոնք Պարսից ծոցի վրայով իրենց երկիրը վերադարձան։

Հիւսէյն բէկ Ամսթերտամի մէջ իր ծախած պարսկական ապրանքներէն եւ Ամսթերտամէն հետը բերած հոլանտական ապրանքներէն հսկայական շահ ապահովեց. բան մը, որ մեծապէս շահագրգռեց նոր ջուղայեցի հայ վաճառականները, որոնք այդ թեւականէն սկսեալ մնայուն յարաբերութիւն հաստատեցին Հոլանտայի հետ, եւ անոնցմէ ոմանք որոշեցին մնայուն բնակութիւն հաստատել Ամսթերտամի մէջ՝ առանց միջնորդներու հոլանտական շուկաներէն օգտուելու համար։

Հայ առեւտրականներ կապեր ունէին հոլանտական գաղթավայրերու վերածուած Հնդկաց ովկիանոսի կղզիներուն եւ յատկապէս ծաւայի հետ, ուր հայկական գաղթօճախներ ալ կազմաւորուեցան։ Անոնք հոլանտացիներուն հետ յարաբերութիւն հաստատեցին եւ յաճախ անոնց հետ առեւտրական գործընկերներ դարձան։



Ամսթերտամ

Ամսթերտամի կարեւորագոյն շուկան կորսնցնելու վտանգին դէմ յանդիման կը գտնուէին, թէ՛ Հոլանտական նաւեր չգործածէին։

Այսպիսի կացութեան առկա կը գտնուէին մասնաւոր հայ վաճառականները, որոնք Զմիւռնիոյ մէջ հաստատուած էին եւ կամ Զմիւռնիոյ նաւահանգիստը իբրեւ արտահանման վայր կը գործածէին։ Անոնցմէ շատեր առեւտրական տուներ ունէին իտալիոյ, Ֆրանսայի եւ Սպանիոյ մէջ եւ տեւական յարաբերութիւն ունէին Հոլանտայի հետ։ Անոնք տեսնելով, որ կարեւոր եւ այդ օրերուն ամէնէն բանավէ Ամսթերտամի շուկան կորսնցնելով մեծապէս պիտի տուժն, որոշեցին անձնապէս Ամսթերտամ երթալ ու հաստատուել, իսկ ոմանք ալ իրենց առեւտրական տուներ հաստատուին հօն, որպէսզի այդպիսով, տեղական հոլանտական նաւերով եւ կամ հոլանտական դրօշ կրող իրենց հայկական նաւերով իրենց առեւտուրը շարունակեն։

Ամսթերտամի հայ առեւտրականներու համայնքը աւելի ստուաբանալով՝ անոնք Արեւելքի հետ Հոլանտայի առեւտրական կապերը աւելի ընդարձակեցին։ Ամսթերտամէն ամբողջ

ՀԻՄՈՍԱՅԻՆ...

Շարունակում Ա. ԷջԳ

ներով ընդունելով, ընդդիմադիր պինդալները Քապույ մտած էին անտեսելով միջազգային ճնշումները՝ անկէ դուրս մնալու, այն մտավախութեամբ, որ մայրաքաղաքին հակակշիռը ձեռք առնելով անոնք պիտի պայքարեն միաժամանակ փուշթունները եւ Փաքիստանը, որ Պուշի դաշնակցութեան մէջ բանալի դաշնակից մըն է եւ ուր փուշթունները բնակչութեան մեծամասնութիւնը կը կազմեն:

Մինչ թալեպանները մեծ թիւերով դէպի հարաւային Քանտահար քաղաքը կը յառաջանային, Փաքիստան հասնող ակնատեսներ կ'ըսէին, թէ հակաթալեպան հապարաւոր պինդալներ նախկին թագաւորական մայրաքաղաքին մէկ օդակայանը գրաւած են եւ կ'ուղղուին դէպի Քանտահար:

Հակաթալեպան այլ պինդալներ հասած են աֆղան սահմանային կեդրոնը՝ դէպի Փաքիստան Թորխամի անցքը:

Արեւմուտքի մէջ, հակաթալեպան բանքեր մը ըսած է, թէ ընդդիմադիր հրամանատար Իսմայիլ Խան երէկ արեւածագին մտած է Հերաթ քաղաքը, որ իր նախկին կեդրոնը եղած է:

Իսկ հարաւարեւմտեան գօտիին մէջ, հակաթալեպան պատերազմի «իշխան» մը յայտնած է, որ իր ուժերը գրաւած են Նիմրուզ նահանգը, որ Իրանի սահմանակից է:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱՍՆԱՅԱՏՈՒԿ ՈՒԺԵՐ

Ամերիկեան մասնաշաղկապ ուժերու խմբակ մը՝ քաղաքային հագուստներով, եւ ԷՄ-16 տիպի գնդացիներով եւ ուղղաթիռներով հասած է Պակրամ օդուժի խարխալը, որ Քապուլի իւսիսը կը խառնուի:

Կենթադրուի, որ ամերիկեան մասնաշաղկապ ուժեր համակարգած են Հիւսիսային Դաշնակցութեան արագընթաց յառաջխաղացքը՝ Ուրբաթ գիշերը նէ ի վեր:

Քապուլի մէջ Պըն Լատենի հետեւորդ կարգ մը արաբ եւ չէչէն պինդալներ ծառեր բարձրացած են յառաջացող ուժերուն վրայ կրակելու համար: Անոնք սպաննուած են եւ երէկ անոնց դիակները կախուած կը մնային ծառերէ կամ ձգուած գետինը:

Տեղի ունեցած են նաեւ մահապատիժի գործադրութիւններ:

Հիւսիսային Դաշնակցութեան ներքին գործոց նախարար Եունէս Քանունի ըսած է, թէ իր ուժերը մայրաքաղաքը գրաւման չեն ենթարկւած եւ թէ Հ. Դաշնակցութիւնը կ'ուզէ խորհուրդ մը հաստատել՝ առ ի պատրաստութիւն փոխանցման կառավարութեան մը:

Սպաննուած պատերազմի «իշխան» Ահմէտ Շահ Մատուտի եղբայրը, որ Հ.

Դաշնակցութեան Լոնտոնի ներկայացուցիչն է, երէկ լոյս յայտնած է, որ նախկին թագաւոր Չահիր Շահ մօտ ատենէն Քապուլ պատուիրակութիւն մը պիտի դրկէ, քաղաքական բանակցութիւններու սկսելու համար:

Հոռմի մէջ, թագաւորին մէկ խորհրդակցանք նախապէս յայտնած է, թէ Հ. Դաշնակցութիւնը թագաւորին հետ գոյացած համաձայնութիւն մը չէ յարգած, Քապուլ մտնելով:

Իսլամապատի մէջ (Փաքիստան), ՄԱԿի մէկ պաշտօնատարը յայտնած է, թէ աւելի քան 100 թալեպաններ, որոնք ապաստանած էին հիւսիսային աֆղան Մապար-ի-Շարիֆ քաղաքին մէկ դպրոցին մէջ, սպաննուած են՝ անցեալ շաբաթ քաղաքին գրաւումէն ետք:

ՄԱԿի մարդկային իրաւանց հարցերու յանձնակատար Մէրի Ռոպինսըն, Մ. Նահանգներու եւ Բրիտանիոյ կոչ ուղղած է, որ քաղաքայիններու իրաւունքը ապահովուի:

ԲԱՇԱԿՈՂՄԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՍԵ ԿՈՉ

Հ. Դաշնակցութեան անսանձելի յառաջխաղացքը երէկ մղած է աշխարհի տարածքին ղեկավարներ կոչ ուղղելու, որ բաշակողմանի կառավարութիւն մը ստեղծուի Աֆղանիստանի մէջ, որ ՄԱԿի աւելի մեծ դերակատարութիւն պէտք է ունենայ:

Մ. Նահանգներու Սպիտակ Տան բանքեր Արի Ֆլեշըր յայտնած է, թէ Պուշ «շատ գոհ է» պատերազմին ընթացքով, սակայն անոր կարծիքով անհրաժեշտ է, որ բոլոր կողմերը յարգեն մարդկային իրաւունքները:

Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլեյր յայտնած է, թէ յաջորդ կառավարութեան մը գծով ծրագիրները յառաջացած վիճակի մէջ են: Ան կոչ ուղղած է ՄԱԿի՝ Քապուլի մէջ ներկայութիւն ըլլալու:

Ռուսիա, որ 1979էն սկսեալ 10 տարի գրաւեալ պահած է Աֆղանիստանը, ողջունած է Քապուլի գրաւումը եւ ըսած, թէ նոր կառավարութիւնը պէտք է ընդգրկէ համայնքային բոլոր խմբակները:

Ֆրանսա, Չինաստան եւ Ինտոնեզիա պոլուացուցած են քաղաքական երկարատեւ պարապի մը վտանգներէն: Նախագահ Ժաք Շիրաք Ապու Տապիի մէջ ըսած է, թէ ընդդիմադիր ուժերու Քապուլ մուտքը աւելի եւս կենսական կը դարձնէ երկրին ապագային գծով քաղաքական լուծում մը:

Պրիքսելի մէջ, Ե. Միութիւնը ողջունած է Հ. Դաշնակցութեան յառաջխաղացքը:

(ՌՈՅԹԸՐԸ)

Ե. ՄԻՈՒԹԻՒՆԸ ...

Շարունակում Ա. ԷջԳ

որ չէ գացած Կիպրոսի գծով ստեղծուած անել վիճակը լուծելու համար:

Ե. Միութիւնը նշած է նաեւ, որ Թուրքիա չէ կրցած օգտակար ձեւով սանձել լայնածիր փտածութիւնը:

Անիկա ըսած է, թէ Թուրքիոյ ուժեղ բանակը, որ 1960էն ի վեր երեք պետական հարուած կապակերպած է, պէտք է վերջ տայ քաղաքային իշխանութիւններուն վրայ իր ապդեցութեան:

ԹՈՒՐԸ ԿԻՊՐԱՅԻՆԵՐՈՒ ԿՈՉ

Միւս կողմէ, Եւրոպական Յանձնաժողովը երէկ կոչ ուղղած է թուրք կիպրացիներուն, որ լուծում մը գոյացնեն՝ վերջ տալու համար կրդ-պիին բաժանումին, ինչ որ առիթ պիտի տայ անոնց Կիպրոսի Ե. Միութեան անդամակցութենէն օգտուելու:

Տեղեկագիրի մը մէջ անիկա ըսած է, որ կրդ-պիին ամբողջութեան անդամակցութիւնը առիթ պիտի տայ տնտեսական տագնապ դիմագրաւող հիւսիսային համայնքին, վայելելու նոյն օգուտները, զորս պիտի վայելեն լոյն կիպրացիները:

Ե. Միութիւնը կը նկատէ, թէ Թուրքիա կարելոր դերակատարութիւն ունի ապահովելու, որ ՄԱԿի ընդհանուր քարտուղարին ի գործ դրած ճիգերը յառաջիկայ քանի մը ամիսներուն դրական արդիւնքներու հասնի, ըսած է անիկա:

ԹՈՒՐԵՐՈՅ ՄԵՋ ՅԱՐՁԱԿՈՒՄ

Թուրքիոյ ապահովութեան ուժերը երէկ Պուտլոյ երկու թաղամասերու վրայ յարձակած են՝ վերջ տալու համար հացադուլի մը, որ աւելի քան 40 Կոն խլած է եւ լուսարձակները դարձուցած երկրին մարդկային իրաւանց խոցելի մարկին վրայ:

Ռստիկանութիւնը արցունքաբեր կապ գործածած է Քիւչիւքարմուքու թաղամասին մէջ բանտերու բարեկարգումներու դէմ բողոքներուն վերջ տալու համար: Անիկա բախում ունեցած է շուրջ 50 անձերու հետ, որոնք քարեր եւ հրձիգ ռումբեր արձակած են:

Երկրորդ գործողութիւն մը՝ Ալիպէյքէօյի մէջ, յանգած է հացադուլի դիմած 7 անձերու եւ անոնց բազմաթիւ հետեւորդներու ձերբակալութեան:

8 օր առաջ նման գործողութեան մը ընթացքին հացադուլի դիմած 4 հոգի սպաննուած էր եւ 10 ուրիշներ վիրաւորուած:

Թուրքիա քննադատուած է իր արեւմուտքի դաշնակիցներուն կողմէ՝ բողոքներուն նկատմամբ իր քայլերուն համար:

Ե. Միութիւնը քննադատած է Անգարան, որովհետեւ անիկա խաղաղօրէն չէ լուծած հարցը եւ կոչ ուղղած Թուրքիոյ, որ թափ տայ ճիգերուն՝ յաւելեալ մահերու կանխարգիլման համար:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5007

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Լիսեռն, ծնկոսկր - Չաստուած:
2. Մեծ հողատէր - Չայնանի:
3. Ձեռքի մաս - Մեծ ուրախութիւն:
4. Լիբանանի գետերէն - Դաշնակցական երբեմնի մամուլէն:
5. Հրոսակ - Այնպէս որ:
6. Օտար պատուանուն - Ազնուականներու դաս:
7. Ուսուցիչ - Վայրի ելակ (հակ.):
8. Չորքոտանիի մը տէրը - Շաղկապ (հակ.):
9. Մէկը - Ծփոց, ձգում - Կանացի օտար շաբաթաթերթ:
10. Արամազդի դուստրերէն - Կռքի շրջանակ (հակ.):
11. Քով, շուրջ - Ձի:

ՈՒՂԱՆԱՅԵԱՏ

1. Համադասական շաղկապ - Վայրի նարդոս:
2. Շերլոք Հոլմզի օգնական բժիշկը - Նոյի որդիներէն:
3. Տառի մը անունը - Չուլմ - Սուտանի լիճերէն:
4. Ածականակերտ մասնիկ - Կրկնուած ձայնաւորներ - Երաշխ:
5. Դասալիք:
6. Երենոս - Ստուգն:
7. Քաջահաւ - Իգական:
8. Գառնսիւրուկ - Քոլումպոսի ծովագնացութեան երեք նաւերէն մէկը:
9. Արական անուն - Խաղաթուղթի մէկնոց:
10. Ստացական ածական - Ասորեստանի մայրաքաղաքը:
11. Վաղենիկ - Սան Մարինոյի «Կրան փրի»:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11

1	Պ	Ր	Տ	Ի	Ջ	Ա	Կ	Ս	Ի		
2	Ո	Ի	Բ	Ե	Կ	Ո	Ջ	Ա	Կ		
3	Լ	Ա	Ս	Բ	Ա	Ք	Ա	Ք	Պ		
4	Ո	Գ	Ի	Յ	Ա	Ր	Ա	Ե	Մ		
5	Ճ	Մ	Բ	Բ	Ս	Ա	Ն	Ա			
6	Ի	Կ	Ո	Ր	Ո	Մ	Ա	Պ	Ա		
7	Կ	Ո	Վ	Տ	Ո	Ն	Ն	Տ	Ր		
8	Ս	Ս	Խ	Լ	Ա	Տ	Ե	Ի			
9	Ա	Տ	Ա	Ն	Ա	Մ	Ա	Ե	Լ		
10	Պ	Ա	Ն	Լ	Ս	Ե	Լ	Պ	Ա		
11	Ա	Ն	Ա	Ս	Ա	Լ	Ի	Ս	Ս		

ԹԻԻ 5006

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

- Peugeot 206 ինքնաշարժ մը
2 անձի Կիպրոս ձամբորդութիւն (6 գիշեր)
2FUJITSU էր քոնսիսիոնէ
2 General Electric լուացքի մեքենայ
Sony հնայ ֆայ Dx5
Philips DVD 711 զուճով
Panasonic հեռատեսիլ 21 ինչ
Sony հեռատեսիլ 21 ինչ
Քոնքինքնալ փուռ

ՀԱՇՅԵՔ 15,000 ՏՈԼԱՐԻ ԱՐԺԷՔԱԻՈՐ ՆՈՒԵՐՆԵՐ

Win up to \$15,000 in prizes

- Peugeot 206
- Trip to Cyprus for 2 persons (6 nights)
- 2 FUJITSU air condition
- 2 General Electric washing machine
- Sony HI FI DX5
- Philips DVD 711 with zoom
- Panasonic TV 21 inch
- Sony TV 21 inch
- Continental oven

